

«Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակ» քարոզարշավը Հայաստանում

Համամոլորակային շարժումն ընդդեմ գենդերային բռնության տարեցտարի նոր թափ է առնում. ավելի շատ մարդիկ են իրենց ձայնը բարձրացնում կանանց դեմ ուղղված բռնությանը «ՈԶ» ասելու համար նոյեմբերի 25-ից մինչև դեկտեմբերի 10-ն անցկացվող «Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակ» քարոզարշավի լայնածավալ միջոցառումների շրջանակում:

Քարոզարշավը ներառում է հետևյալ հիշարժան օրերը՝

- նոյեմբերի 25 – Կանանց դեմ ուղղված բռնության վերացման միջազգային օր,
- դեկտեմբերի 1 – ՁԻԱՀ-ի համաշխարհային օր,
- դեկտեմբերի 2 – Ստրկության վերացման միջազգային օր,
- դեկտեմբերի 6 – Մոնրեալի սպանդի տարելից և
- դեկտեմբերի 10 – Մարդու իրավունքների միջազգային օր:

1991-ից ի վեր, ավելի քան 164 երկրներից ավելի քան 3700 կազմակերպություններ են մասնակցել «Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակ» ամենամյա համամոլորակային քարոզարշավին, որն ուղղված է կանանց դեմ բռնության բոլոր ձևերի վերացմանը: 2000 թ.-ին «Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակը» մուտք գործեց նաև կովկասյան տարածաշրջան: Հայաստանում 16-օրյակն իրականացվում է 2001 թ.-ից:

16-օրյա քարոզարշավի նպատակներն են՝

• Գենդերային բռնության և նրա բոլոր տարատեսակների մասին Հայաստանի բնակչության իրազեկության բարձրացում և գիտելիքների խորացում՝ Հայաստանում կանանց մարդու իրավունքների չճանաչված խախտումները բացահայտելու և կանանց դեմ ուղղված բռնության նկատմամբ վերաբերմունքը փոխելու միջոցով:
• Հասնել կառավարության կողմից այն հանձնառությանն ու հավաստմանը, ըստ որի կանանց դեմ ուղղված բռնությունը, ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր իրավախախտների կողմից, մարդու իրավունքների ոտնահարում է և որ միջազգային պայմանագրերի ստորագրումն ու վավերացումը շատ քիչ է, եթե զուգորդված չէ ազգային օրենսդրական դաշտի շոշափելի և համաժամանակ փոփոխությունների հետ:

• Զարգացնել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների՝ շահերի արդյունավետ պաշտպանության և բռնության կանխարգելման ծրագրերի իրականացման կարողությունները:

• Խթանել ՁԼՄ-ների կողմից այս հարցի վերաբերյալ բնակչության իրազեկումը և գենդերային բռնության վերացման ուղիների ավելի ակտիվ լուսաբանումը:

• Մատարել համագործակցությունը կանանց, մարդու իրավունքների և առողջապահության հարցերով զբաղվող կազմակերպությունների, ինչպես նաև կանանց դեմ ուղղված բռնության ոլորտի մասնագետների միջև, և

«Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակ» քարոզարշավը Հայաստանում

• Հնարավորությունն ընձեռել հանրությանն ու քաղաքացիական հասարակությանը՝ համատեղելու իրենց ջանքերն ընդդեմ գենդերային բռնության:

«Սպիտակ Ժապավենի» քարոզարշավ

Սպիտակ ժապավենի քարոզարշավը կանանց նկատմամբ բռնությանը վերջ տալու ուղղությամբ աշխատող տղամարդկանց կարևորագույն միջոցառումն է: Ավելի քան 55 երկրներում տղամարդիկ և կանայք իրականացնում են տղամարդկանց և տղաների իրազեկության բարձրացման քարոզարշավներ: Որոշ պետություններում ծավալվում են հանրային իրազեկության բարձրացման ծրագրեր՝ առանձնակի ուշադրություն դարձնելով կանանց նկատմամբ բռնության վերացմանը:

Ինչպե՞ս է սկիզբ առել Սպիտակ ժապավենի քարոզարշավը:

1991 թվականին մի քանի տղամարդիկ Կանադայում որոշեցին, որ իրենք պատասխանատվություն են կրում՝ տղամարդկանց կոչ անելու բարձրաձայնել կանանց նկատմամբ բռնության երևույթների մասին: Սպիտակ ժապավեն կրելը խորհրդանշում է կանանց նկատմամբ բռնության անընդունելիությունը տղամարդկանց համար: Վեցշաբաթյա նախապատրաստական աշխատանքների արդյունքում Կանադայում սպիտակ ժապավեններ կրող տղամարդկանց թիվը հասավ 100,000-ի: Մյուսները ներգրավվեցին քննարկումներին և բանավեճերին:

Ի՞նչ է նշանավորում սպիտակ ժապավեն կրելը:

Սպիտակ ժապավեն կրելն անձի ուխտն է՝ երբևէ չբռնանալ կանանց և աղջիկներին, չհանդուրժել այդօրինակ բռնությունը և չլռել նման դեպքերի մասին: Սպիտակ ժապավեն կրողն այդպես էլ ասում է. «Մեր ապագան գերծ է լինելու կանանց նկատմամբ բռնությունից»:

Ի՞նչ նպատակ է հետապնդում Սպիտակ ժապավենի քարոզարշավը, ինչպե՞ս է այն իրագործվում:

Սպիտակ ժապավենի քարոզարշավի հիմնական նպատակը կանանց նկատմամբ բռնության բոլոր դրսևորումներն արմատախիլ անելն է: Նպատակն իրագործվում է՝ լուծելով հետևյալ հինգ խնդիրները.

• Կոչ անել յուրաքանչյուր անձի՝ բարձրաձայնելու մտահոգությունները և խորհելու սեփական համոզմունքների, արտահայտությունների և վարվելակերպի մասին,

«Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակ» քարոզարշավը Հայաստանում

- Քարոզարշավի շրջանակներում պատրաստվող կրթական նյութերի հիման վրա բարձրացնել երիտասարդության, հատկապես՝ դեռահասների և տղաների իրազեկությունը խնդրի վերաբերյալ
- Բարձրացնել խնդրի վերաբերյալ հանրային իրազեկությունը,
- Համագործակցել կանանց կազմակերպությունների, մասնավոր հատվածի, լրատվամիջոցների և այլ գործընկերների հետ՝ կերտելու կանանց նկատմամբ բռնությունից զերծ ապագա, և
- Փորձով, ռեսուրսներով և ցանցային կապերով օժանդակել Սպիտակ ժապավենի քարոզարշավների իրականացմանը:

Աղբյուրը՝ Սպիտակ ժապավենի քարոզարշավի պաշտոնական կայքն
ինտերնետում՝ <http://www.whiteribbon.ca>